ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/203

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 03.05.2022թ. թիվ 26/26-1/7894-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի 19.04.2022թ. և 26.04.2022թ. գրությունների հիման վրա, 03.05.2022թ. թիվ 26/26-1/7894-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/203 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:25-ին և 13.06.2022թ. ժամը 10:37 հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.04.2022թ. և 26.04.2022թ. գրություններով մասնավորապես հայտնել է հետևյալը.

««Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 2021թ. դեկտեմբերի 27-ին կնքվել է ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1 ծածկագրով սննդմթերքի ձեռքբերման պայմանագիր: Սակայն, Մատակարարը իր պարտականությունները կատարում է ոչ պատշաճ կերպով՝ խախտում է մատակարարման ժամկետները, փաստաթղթերը ներկայացնում է թերի լրացված կամ դրանք բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն 19.04.2022թ. միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Դիմում եմ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներառել «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կից ներկայացվում է «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից 01.12.2021թ. հայտարարված ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1 ծածկագրով ընթացակարգի փաթեթի էլեկտրոնային տարբերակը և Պայմանագրի լուսապատճենը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/203 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:25-ին և 13.06.2022թ. ժամը 10:37 հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.12.2021թ. կնքվել է «ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված 19.04.2022թ. թիվ 01/359 գրությամբ հայտնել է հետևյալը. ««Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի դեկտեմբերի 27-ին կնքված ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կազմակերպությունը ստանձնել է պարտականություններ մատակարարել սննդամթերք համաձայն՝ Հավելված 1-ով նախատեսված քանակի և որակի: Սակայն Ձեր կազմակերպությունը այդ պարտականությունները կատարում է թերի՝ խախտելով պայմանագրով նախատեսված կետերը, մասնավորապես հաճախ են լինում պահանջված սննդամթերքի քանակի մատակարարման պակաս, դուրս գրված հաշիվ-ապրանքագրի և մատակարարված ապրանքատեսակի քանակի անհամապատասխանություն, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտերի բացակայություն: Տվյալ բացթողումների համար բազմիցս էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել և տրվել է ողջամիտ ժամկետ դրանք շտկելու: 2022թ. ապրիլի 12-ին հերթական մատակարարումն կրկին անգամ թերի կատարելու պատճառով պատվերը

չի ընդունվել, որից հետո ընկերությունը ոչ մի քայլի չի դիմել այդ խնդիրը կարգավորելու նպատակով: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն 19.04.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» Հավելված 1-ի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները: Համաձայն Կարգ 33-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետի, մատակարարման ժամկետների խախտման պատճառով կկիրառվի տույժ չմատակարարված սննդամթերքի գնի 0.05%-ի չափով: Միաժամանակ տեղեկացվում է, որ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից որպես Պայմանագրի կատարման ապահովում և որակավորման ապահովում «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրերում նշված գումարները սահմանված կարգով և ժամկետում համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

3. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

4. «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, 19.04.2022թ. և 26.04.2022թ. գրություններով լիազորված մարմին է ներկայացրել կնքված Պայմանագրի շրջանակներում «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.12.2021թ. կնքված պայմանագիրը և Պայմանագրի լուծման վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2022թ. թիվ 26/26-1/7894-2022 գրությունը, «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի 19.04.2022թ. և 26.04.2022թ. գրությունները, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.12.2021թ. կնքվել է «ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված 19.04.2022թ. թիվ 01/359 գրությամբ հայտնել է հետևյալը. ««Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի դեկտեմբերի 27-ին կնքված ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման պայմանագրի շրջանակներում Ձեր կազմակերպությունը ստանձնել է պարտականություններ մատակարարել սննդամթերք համաձայն՝ Հավելված 1-ով նախատեսված քանակի և որակի: Սակայն Ձեր կազմակերպությունը այդ պարտականությունները կատարում է թերի՝ խախտելով պայմանագրով նախատեսված կետերը, մասնավորապես հաճախ են լինում պահանջված սննդամթերքի քանակի մատակարարման պակաս, դուրս գրված հաշիվ-ապրանքագրի և մատակարարված ապրանքատեսակի քանակի անհամապատասխանություն, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտերի բացակայություն: Տվյալ բացթողումների համար բազմիցս էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել և տրվել է ողջամիտ ժամկետ դրանք շտկելու: 2022թ. ապրիլի 12-ին

հերթական մատակարարումն կրկին անգամ թերի կատարելու պատճառով պատվերը չի ընդունվել, որից հետո ընկերությունը ոչ մի քայլի չի դիմել այդ խնդիրը կարգավորելու նպատակով: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն 19.04.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» Հավելված 1-ի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները: Համաձայն Կարգ 33-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետի, մատակարարման ժամկետների խախտման պատճառով կկիրառվի տույժ չմատակարարված սննդամթերքի գնի 0.05%-ի չափով: Միաժամանակ տեղեկացվում է, որ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից որպես Պայմանագրի կատարման ապահովում և որակավորման ապահովում «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրերում նշված գումարները սահմանված կարգով և ժամկետում համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 19.04.2022թ. և 26.04.2022թ. գրություններով լիազորված մարմին է ներկայացրել կնքված Պայմանագրի շրջանակներում «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.12.2021թ. կնքված պայմանագիրը և Պայմանագրի լուծման վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գ**ործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը,** որով կապացուցվեր Պայմանագրի շրջանակներում «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված քանակի ապրանքները Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում թերի

մատակարարելու փաստը, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները, ***<u>Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:</u>***

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **<u>համապատասխան հիմքերով</u>**: Տվյալ դեպքում՝ որպես հիմք հանդիսանում է Պայմանագրի շրջանակներում «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված քանակի ապրանքները Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում թերի մատակարարելու փաստը, այսինքն՝ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ չկատարելը հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները և հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված քանակի ապրանքները Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում թերի մատակարարելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Ընկերության կողմից պատշաճ չկատարելու փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2022թ. թիվ 26/26-1/7894-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**